ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՎԱՐԴԱՎԱՌՅԱՆ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Համիկ Աբրահամյան

Ուխտագնացությունը յուրաքանչյուր էթնոսի, այդ թվում՝ հայերի հոգևոր-բարեպաշտական կյանքի անքակտելի մասն է:

Ուխտավայր-սրբատեղիներ այցելում են տարբեր առիթներով՝ անձնական խնդրանք-ակնկալիք հղելու և սրբի բարեխոսությունը խնդրելու կամ սրբին երախտագիտություն հայտնելու արդեն իրականացված նպատակի համար:

Վարդավառը, լինելով ամառային շրջանի տոն, թե՛ ավանդական, թե՛ արդի կենցաղում հիմնականում նշվել է և նշվում է ուխտավայրերում:

Հիմնվելով ազգագրական, մատենագրական, ուղեգրական սկզբնաղբյուրների, ուսումնասիրությունների, գեղարվեստական գրականության և դաշտային ազգագրական նյութերի վրա՝ հանգամանորեն ծանոթացել ենք շուրջ հարյուր վաթսուն ուխտավայր-սրբատեղիների, որոնք ժողովուրդը կապում է Վարդավառի հետ:

Վերլուծելով առկա նյութը՝ փորձել ենք վեր հանել այդ ուխտավայր-սրբատեղիների հետ կապված որոշակի օրինաչափություններ:

1. Ուխտավայրերի անմիջական կապը Վարդավառ տոնի հետ.

Բնակչության մի ստվար հատվածի համար տոնի հիմնական օրը Վարդավառն է: Սակայն որոշ ուխտավայրեր գնում են ոչ միայն Վարդավառին, այլ նաև Աստվածածնի Վերափոխմանը: Այդպիսիք են Գեղարդավանքը,[1] Արակայի կամ Ս. Գրիգոր Նարեկացու (վանքի ուխտի օր է նաև Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտի տոնը[2]), Արճակի Ասպարածին վանքերը:[3]

---

[1] Գեղարդավանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան (այսուհետ՝ ՔՀ), Երևան, 2002, էջ 204:

[2] **Հ. Ճանիկեան**, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 36-37:

[3] **Վ. Սվազլեան**, Վարդավառի հեթանոսական ակունքները արեւմտահայոց բանահիւսութեան մէջ, Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԻԱ հատոր, Պէյրութ, 2001, էջ 84-85, 97:

2. Ուխտավայրերի անմիջական կապն առանձին սրբերի հետ.

Վարդավառյան առանձին ուխտավայրեր կրում են տարբեր սրբերի անուններ: Օրինակ՝ վարդավառյան ամենանշանավոր ուխտատեղին Մշո Ս. Կարապետի վանքն էր[1]: Կեսարիայում նույնպես Վարդավառի գլխավոր ուխտատեղին եղել է Ս. Կարապետի վանքը, իսկ տոնը կոչվել է սրբի անունով[2]: Էրերին գյուղում (Վանի վիլայեթ) գտնվող Ս. Սահակի վանքում Վարդավառի կիրակի հանուն սրբի հատուկ տոն է կատարվել[3]:

Ուշագրավ է, որ այս երևույթին հանդիպում ենք նաև ներկայիս ՀՀ-ի որոշ բնակավայրերում: Շիրակի Սառնաղբյուր գյուղում, որտեղ վարդավառյան ուխտատեղին Լուսավորչի ճգնարան համարվող Զաղա կամ Ս. Գրիգոր Լուսավորիչ սրբավայրն է, Վարդավառը համարվում է Գրիգոր Լուսավորչի տոն. «Հըխտի օր է, Սրբի օր է, Գրիգոր Լուսավորչի տոնն է»[4][5]:

Սյունիքի Անգեղակոթ, Բալաք, Շաղաթ գյուղերի բնակիչները կարծում են, որ Վարդավառը Վարդան Մամիկոնյանի հիշատակի տոնն է: Նշված գյուղերի համար տոնի գլխավոր սրբատեղին Անգեղակոթի մոտ գտնվող Ս. Վարդան Զորավար եկեղեցին է:

Վայոց Ձորի Գնդևազ գյուղում Վարդավառը «Մարիամ Աստվածածնի օրենքն է, նրա տոնը՝ որպես հարգանքի նշան»[6]:

---

1 **Ռաֆֆի**, Սալբի, Երկերի ժողովածու, հատոր երկրորդ, Երևան, 1983, էջ 34: **Շաքար**, Վարդավառի ավանդությունները, «Ծաղիկ» (հանդես), Կ. Պոլիս, 1895, էջ 421: **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն Հայ Կեսարիոյ (տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւններ), Բ հատոր, Գահիրե, 1937, էջ 1748:

2 **Ա. Ալպոյաճեան**, նշվ. աշխ., էջ 1748:

3 **Գ. Շէրենց**, Սրբավայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց Վանօրէից եւ ուսումնարանաց, Թիֆլիս, 1902, էջ 76: **Ե. Լալայեան**, Վասպուրական, Նշանավոր վանքեր, ԱՀ, գիրք XXI, Թիֆլիս, 1911, էջ 99:

4 **Հ. Աբրահամյան**, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), Շիրակ (Սառնաղբյուր), 2012, էջ 22:

5 Ուշագրավ է, որ Գրիգոր Լուսավորչի հետ են կապված նաև Մշո Ս. Կարապետի, Կեսարիայի Ս. Կարապետի և Էրերին գյուղի Ս. Սահակի վանքերը: Ըստ ավանդության՝ ս. Կարապետի անունը կրող նշված վանքերը հիմնել է Գրիգոր Լուսավորիչը (տե՛ս Մշո Ս. Կարապետ վանք, ՔՀ, էջ 754: **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Ա հատոր, Գահիրէ, 1937, էջ 987), իսկ Սուրբ Սահակի վանքի լեռան գագաթը կոչվել է Խաչգլուխ, ուր ավանդության համաձայն՝ ճգնել է Գրիգոր Լուսավորիչը և մի խաչ օծել, իսկ տեղի մատուռներից մեկում՝ աղոթել (տե՛ս **Ե. Լալայեան**, նշվ. աշխ., էջ 99):

6 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Վայոց Ձոր (Գնդևազ), 2002, էջ 31:

Եղած նյութից ակնառու է, որ ժողովրդի որոշակի հատվածի ընկալմամբ տոնը կապված է հինգ մեծագույն սրբերի՝ Հովհաննես Մկրտչի, Մարիամ Աստվածածնի, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի և Վարդան Մամիկոնյանի հետ:

Շատ ուշագրավ է, որ ժողովուրդը սրբի և տոնի միջև պատճառահետևանքային կապ չի տեսնում և ընդհուպ մինչև մեր օրերը պարզապես ընկալում է որպես սրբի տոն կամ ուխտի օր, քանի որ տոնի ուխտավայրը նրա անվան սրբավայրն է: Բացառություն է, թերևս, միայն Անգեղակոթի Ս. Վարդան Զորավար սրբավայրի դեպքում,[1] քանի որ տեղաբնակները Վարդան և Վարդավառ անվանումների միջև ընդհանրություններ տեսնում են, հակառակ դեպքում տոնը կնշվեր գյուղի մեկ այլ եկեղեցում (Ս. Աստվածածին (12-րդ դ.), Ս. Ստեփանոս (18-րդ դ.)): Ս. Վարդանի անունը կրող այլ ուխտավայրերի դեպքում, օրինակ, ինչպես Վարդենիսի Սըվարդանի, նման մոտեցում տեսանելի չէ, ինչը կարելի է բացատրել նրանով, որ տվյալ սրբավայրն առանձին ուխտի օր չունի, այլ լինելով «զորավոր»՝ ուխտավորներ է ունենում նաև Վարդավառին:[2]

Ինչ վերաբերում է տոնը Ս. Կարապետի անունով կոչելուն, ապա դա տրամաբանական է այնքանով, որ նախաքրիստոնեական Իննակնյա սրբավայրում, ուր կատարվել են Նավասարդյան տոներ, որոնց ժառանգորդ է նաև Վարդավառը, դեռևս 4-րդ դարում Ս. Կարապետի անվան վանք է հիմնվել և նրա հիշատակի տոն հաստատվել, որն ավելի ուշ փոխարինվել է Վարդավառ-Պայծառակերպություն տոնով:

Կարելի է ենթադրել, որ բացառյալ Անգեղակոթի Ս. Վարդանի և Մշո Ս. Կարապետի, մնացյալ դեպքերում ժողովուրդն իր համար ամենակարևոր տոնը (կամ տոներից մեկը) նշել է վաղնջական ժամանակներից սրբավայրի գործառույթ ունեցող վայրում, որտեղ քրիստոնեության շրջանում հանվան սրբերից մեկի վանք կամ եկեղեցի է հիմնադրվել, կամ ժողովուրդն է «քրիստոնեացրել» նախաքրիստոնեական սրբավայրը և այն կապել սիրելի սրբի հետ:

---

[1] Պատմում են, որ գյուղի մերձակայքում գտնվող Վ. Մամիկոնյանի անունը կրող սրբավայրում ամփոփված է զորավարի դին: Ոմանք էլ ասում են, որ նույն տեղում թաղված է ոչ թէ դին, այլ գլուխը, ճկույթը, աջը (տե՛ս **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Սյունիք (Սպանդարյան), 2007, էջ 17, 20):

[2] Ավանդազրույցներից մեկի համաձայն՝ Վարդան Մամիկոնյանն Ավարայրի դաշտ գնալիս մի գիշեր այնտեղ է անցկացրել (տե՛ս **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Գեղարքունիք (Ակունք), 2004, էջ 22-23):

3. Կանոնական սրբատեղիներ.

Առաժմ առկա տվյալների հիման վրա բավականին մեծ թիվ են կազմում *կանոնական սրբատեղիները:* Վերջիններս ի սպաս են դրվել Հայ Եկեղեցու եկեղեցաշինական ավանդույթների հետևողությամբ և սրբագործված են (*վանք* (աղյուսակ № 1), *եկեղեցի* (աղյուսակ № 2), *մատուռ* (աղյուսակ № 3), *խաչքար* (աղյուսակ № 4):

4. Ոչ կանոնական սրբատեղիներ.

Ուխտավայրերի այս տիպն իրենից ներկայացնում է *նահատակների գերեզմաններ* (աղյուսակ № 5), *աղբյուրներ* (աղյուսակ № 6), *ծառեր* (աղյուսակ № 7), *լառնագագաթներ* (աղյուսակ № 8), *քարանձավատիպ ուխտավայր-սրբատեղիներ* (աղյուսակ № 9), *յայլաներ* (աղյուսակ № 10): Ոչ կանոնական ուխտավայր-սրբատեղիների մի առանձին խումբ կարելի է համարել *համալիր ուխտավայր-սրբատեղիներ* (աղյուսակ № 11), որոնք բազմաբաղադրիչ են և ընդգրկում են սրբազան համարվող մի քանի տարր, օրինակ՝ մատուռ, ծառ, քար ևն: Կարծում ենք, որ կլինեն նաև վարդավառյան այնպիսի համալիր ուխտավայր-սրբատեղիներ, որոնք բաղկացած կլինեն կանոնական և ոչ կանոնական տարրերից:[1]

Սույն հոդվածում մեր կողմից ներկայացված ոչ կանոնական սրբավայրերի տիպաբանումը պայմանական է, քանի որ այդպիսի ուխտավայր-սրբատեղիները խիստ բազմազան են և ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս դրանց նոր տիպեր, ինչպես՝ սրբազան գրվածքներ (օր.՝ Սարուշենի Ավետարան)[2], քարակույտեր (օր.՝ Կապսի Ս. Գևորգ[3]) ևն:[4]

---

[1] Կանոնական և ոչ կանոնական բաղադրիչներ ունեցող ուխտավայր-սրբատեղի է, օրինակ, Գեղարդավանքը, որտեղ, հիմնական վանական համալիրի կողքին կան ժողովրդական քրիստոնեությունից ծնունդ առած տարրեր. բուժիչ ջուր, որից հավատացյալները խմում են և մեջը դրամ գցում, երազանքի ծառ, որից մարդիկ թաշկինակ կամ իրենց պատկանող որևէ իր են կապում, երազանքի պատ, որի վրայի փոքրիկ անցքերի մեջ հավատացյալները, որոշակի հեռավորության վրա կանգնելով, քար են գցում և խորշի մեջ ընկնելու դեպքում ակնկալում երազանքի իրականացում: Վանքից քիչ այն կողմ գտնվող քարանձավում միմյանց վրա շարված քարերի խմբեր են, որոնք նույնպես կապվում են մարդկանց նպատակների իրականացման հետ: Վանքը, սակայն, վարդավառյան ուխտավայր չէ:

[2] **Ե. Լալայեան**, Վարանդա, Նշանավոր տոներ, ԱՀ, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 348:

[3] **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Շիրակ (Կապս), 2012, էջ 13, 15, 17: **Ա. Պողոսյան**, ԴԱՆ, Շիրակ (Կապս), 2012, էջ 11:

[4] Նմանատիպ ուխտավայր-սրբատեղիների դասակարգման օրինակ են ներկայացրել ազգագրագետներ Լ. Վարդանյանը և Հ. Սարգսյանը՝ առաջարկելով հետևյալ խմբե-

Նմանատիպ սրբատեղիները (աղյուսակ № 12) ներկայացրել ենք «Չտիպաբանված ուխտավայր-սրբատեղիներ» պայմանական անվանմամբ:

Գրավոր աղբյուրներից և դաշտային ազգագրական ուսումնասիրություններից մեզ հայտնի տվյալներով գրանցել ենք 160 վարդավառյան ուխտավայր-սրբատեղիներ, որոնցից **37 վանք** (13-ը՝ ՀՀ-ում, 2-ը՝ Արցախում, 2-ը՝ Ադրբեջանում, 18-ը՝ Արևմտյան Հայաստանում, 1-ը՝ Սիրիայում, 1-ը՝ ՌԴ-ում), **16 եկեղեցի** (8-ը՝ ՀՀ-ում, 1-ը՝ Արցախում, 3-ը՝ Արևմտյան Հայաստանում, 1-ը՝ Թուրքիայում, 1-ը՝ Հյուսիսային Կովկասում (Դաղստան), 1-ը՝ Նախիջևանում, 1-ը՝ Իրանում), **13 մատուռ** (9-ը՝ ՀՀ-ում, 2-ը՝ Ջավախքում, 2-ը՝ Արևմտյան Հայաստանում), **2 խաչքար** (ՀՀ-ում), **5 նահատակի գերեզման** (Ադրբեջանում), **34 աղբյուր** (25-ը՝ ՀՀ-ում, 7-ը՝ Արևմտյան Հայաստանում, 1-ը՝ Նախիջևանում, 1-ը՝ Սիրիայում), **2 ծառ** (1-ը՝ ՀՀ-ում, 1-ը՝ Արևմտյան Հայաստանում), **8 լեռնագագաթ** (5-ը՝ ՀՀ-ում, 1-ը՝ Արցախում, 2-ը՝ Արևմտյան Հայաստանում), **7 քարանձավատիպ ուխտավայր-սրբատեղի** (6-ը՝ ՀՀ-ում, 1-ը՝ Արևմտյան Հայաստանում), **6 յայլա** (ՀՀ-ում), **2 համալիր ուխտավայր-սրբատեղի** (ՀՀ-ում), **28 չտիպաբանված ուխտատեղիներ** (20-ը՝ ՀՀ-ում, 2-ը՝ Արցախում, 1-ը՝ Ջավախքում, 5-ը՝ Արևմտյան Հայաստանում):

Ընդհանուր պատկերը հետևյալն է. 97 ուխտավայր՝ ՀՀ-ում, 6-ը՝ Արցախում, 3-ը՝ Ջավախքում, 39-ը՝ Արևմտյան Հայաստանում, 2-ը՝ Սիրիայում, 2-ը՝ ՌԴ-ում, 1-ը՝ Թուրքիայում, 2-ը՝ Նախիջևանում, 7-ը՝ Ադրբեջանում, 1-ը՝ Իրանում:

Ուխտավայր-սրբատեղիների մի ստվար հատված, մնացած լինելով Պատմական Հայաստանի տարածքում, կանգուն չէ, ինչպես Վարդավառի ամենանշանավոր Ս. Հովհաննես Կարապետի վանքը: Մի մասն էլ, գտնվելով այլ էթնիկ հանրույթներով բնակեցված տարածքներում, վաղուց ի վեր դադարել է իր գործառույթը կատարել:

Ներկայումս վարդավառյան նշանավոր ուխտավայրեր են Սառնաղբյուր գյուղի Զաղա կամ Ս. Գրիգոր Լուսավորիչ ուխտատեղին, Հառիճավանքը (Շիրակի մարզ), Ղալթաղչի Ս. Հովհաննեսը (Լոռու մարզ), Հով-

---

ը՝ լեռնագագաթներ, քարանձավներ, լեռնանցքներ, ճգնավորների ու նահատակների գերեզմաններ, մատուռներ, սուրբ աղբյուրներ, ծառեր և պուրակներ (տե՛ս **Լ. Վարդանյան, Հ. Սարգսյան**, Հայոց սրբավայրերի դասակարգման փորձ (ըստ Ստ. Լիսիցյանի Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի դաշտային ազգագրական նյութերի), Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 368-376):

հաննավանքը (Արագածոտնի մարզ), Դաշ-Գափուն, Իշխանավանքը (Գեղարքունիքի մարզ), Մակարավանքը, Սրվեղի վանքը (Տավուշ), Վարդան Զորավար եկեղեցին (Սյունիքի մարզ), Աբուլը (Ջավախք) ևն:

5. Այլ էթնիկ հանրույթների մասնակցությամբ ուխտավայրեր.

19-րդ դարում և 20-րդ դարասկզբին շատ ուխտավայրեր (որոնց թվում նաև վարդավառյան) նվիրական են եղել ոչ միայն հայերի, այլև հարևանությամբ ապրող մահմեդականների՝ թուրքերի, ադրբեջանցիների և քրդերի համար: Այդպիսով ուխտագնացությունը կատարել է միջէթնիկ փոխշփումներ ապահովող կարևոր դեր[1]: Այդպիսիք են Գեղարքունիքի Աղմաղան (Աբդըլլասար) լեռան գագաթին գտնվող 19-րդ դարավերջի փոքրիկ մատուռը (թուրքեր, քրդեր)[2], Սյունիքի Խուստուփ գագաթը (մահմեդականներ)[3], Զվարում գտնվող եկեղեցին (մահմեդականներ)[4], Սարվարդը կամ Աղոթարանը (թուրքեր)[5], Ղարա-Ղայան (թուրքեր)[6], Արցախում՝ Դիզափայտի կատարին գտնվող Կատարի վանքը (ադրբեջանցիներ, քրդեր)[7], Ղարադաղի Ս. Գևորգ եկեղեցին (թուրքեր)[8], Մշո Ս. Կարապետի վանքը (թուրքեր, քրդեր)[9], Խարբերդի նահանգի Զարսանճագ գավառակի Գոտարիճ գյուղի Ս. Գևորգ և Ս. Աստվածածին, Մեծ-

---

1 Տոների և ուխտագնացությունների միջէթնիկ փոխշփումներ կատարող կարևոր դերին հանգամանորեն անդրադարձել է Սամվել Մկրտչյանը (տե՛ս **Ս. Մկրտչյան,** Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 232-235):

2 **Ե. Լալայեան**, Նոր-Բայազէտի գաւառ, ԱՀ, գիրք XVII, Թիֆլիս, 1908, էջ 86:

3 **Ստ. Լիսիցյան**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 275-276: Նույնի՝ "Святыни" у перевалов, Советская этнография, № 4-5, Москва, 1936, с. 202.

4 **Ст. Лисицян**, "Святыни" у перевалов, с. 202.

5 Նույնի՝ Զանգեզուրի հայերը, էջ 279:

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում, էջ 201: **Ստ. Լիսիցյան**, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշար (այսուհետ՝ ՀԱԲ), պրակ 12, Երևան, 1981, էջ 55: **Մակար եպս. Բարխուդարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք. Արցախ, Երևան, 1999, էջ 204: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 107, հ. 4, Երևան, 1998, էջ 313:

8 **Հ. Հովսեփյան**, Ղարադաղի հայերը, Ազգագրություն, աշխատասիրությամբ Սուրեն Հոբոսյանի, հ. I, Երևան, 2009, էջ 420:

9 **Ռաֆֆի**, նշվ. աշխ., էջ 34: **Շաքար,** նշվ. աշխ., էջ 421: **Ա. Ալպոյաճեան**, նշվ. աշխ., էջ 1748:

կերտի Քառասուն մանկունք վանքերը (քրդեր)[1], Ղզլարի Ս. Գևորգ ուխտավայրը (մահմեդականներ)[2], Քղիի Սուրբ Լույս լեռը (քրդեր)[3]:

6. Ամենատարբեր բնակավայրերից ձևավորված ուխտավորների կազմ.

Որպես օրինաչափություն՝ վարդավառյան բոլոր սրբավայրերի ուխտավորները տարբեր բնակավայրերից են, քանի որ սովորույթի համաձայն՝ նշված տոնի առիթով այլ վայրերում ապրող հարազատներն այցելում են այն ազգականին, որի բնակության վայրում վարդավառյան ավանդույթները կենցաղավարում են:

Ստորև բերված աղյուսակում փորձել ենք ներկայացնել ուխտավայր-սրբատեղիի տիպը, գտնվելու վայրը, կառուցման ժամանակը (ժամանակաշրջանը), ընդհանուր վիճակը և այլն:

---

1 **Վ. Սվազլեան**, նշվ. աշխ., էջ 22:

2 **Գ. Գևորգյան**, Ղզլար, ՀԱԲ, պրակ 10, Երևան, 1980, էջ 9, 64:

3 **Վ. Տէր-Մինասեան**, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, Բ հատոր, Կ. Պոլիս, 1904, էջ 150-51:

Վարդավառյան ուխտավայրերի տիպաբանական աղյուսակ

Ա. Կանոնական սրբատեղիներ

Վանքեր Աղյուսակ 1

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը [1]
1.	Հովհաննավանք[2]	Արագածոտնի մարզ	հիմնել է Գրիգոր Լուսավորիչը, կառուցվել է 4-13-րդ դդ.	կանգուն	Վարդավառ
2.	Գեղարդավանք[3]	Կոտայքի մարզ	հիմնել է Գրիգոր Լուսավորիչը, կառուցվել է 4-13-ր դդ.	կանգուն	Վարդավառ, Աստվածածնի վերափոխում
3.	Ս. Աստվածածին վիմափոր[4]	Վայոց Ձորի մարզ, Մարտիրոս գյուղ	13-րդ դար	կանգուն	Վարդավառ
4.	Իշխանավանք[5]	Գեղարքունիքի մարզ, Ներքին և Վերին Գետաշեն գյուղերի մոտ	13-րդ դար	կանգուն	Վարդավառ
5.	Սրվեղ[6]	Տավուշի մարզ, Այգեհովիտ գյուղից 3 կմ հս-արմ.	12-րդ դար 19-րդ դար	կիսախոնարհ	Վարդավառ
6.	Սրանոց[7]	Տավուշի մարզ, Կիրանց գյուղի մոտ			Վարդավառ
7.	Մակարավանք[8]	Տավուշի մարզ, Աչաջուր գյուղից 3կմ	10-13-րդ դարեր	կանգուն	Վարդավառ

---

1 Աղյուսակների այս սյունակում տվյալ ուխտավայրի տոնակատարության հիմնական օրը մգեցված է:

2 **Պ. Պռոշյան**, Սոս և Վարդիթեր, Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երևան, 1962, էջ 188:

3 Գեղարդավանք, ՔՀ, էջ 204:

4 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Վայոց Ձոր (Մարտիրոս), 2002, էջ 22, 23:

5 Հաղորդել են Երևանում բնակություն հաստատած, սակայն ամեն տարի՝ Վարդավառին, Իշխանավանք մեկնող վարդենիկցիներ:

6 **Ս. Մկրտչյան**, Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Երևան, 2010, էջ 99:

7 Նույնի՝ Վարդավառի էթնամշակութային և սոցիալական առանձնահատկությունները Տավուշում, Հայ ժողովրդական մշակույթ, XIV, Երևան, 2007, էջ 204:

8 Այս մասին հայտնել է պ.գ.դ. Սամվել Մկրտչյանը:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը [1]
		հարավ-արևմուտք՝ Պայտաթափ լեռան անտառապատ լանջին			
8.	Կիրանց[1]	Տավուշի մարզ, Կիրանց գյուղի մոտ	13-րդ դար	կանգուն	Վարդավառ
9.	Հառիճավանք[2]	Շիրակի մարզ, Հառիճ գյուղ	7-13-րդ դարեր	կանգուն	Վարդավառ
10.	Մարմաշեն [3]	Շիրակի մարզ	10-11-րդ դարեր	կանգուն	Վարդավառ
11.	Բագավանի Ս. Հովհաննես [4]	Սյունիքի մարզ, Նպատ լեռան ստորոտին	հիմնել է Գրիգոր Լուսավորիչը. վանքը կառուցվել է 7-րդ դարում	խոնարհված	Վարդավառ
12.	Տաթև[5]	Սյունիքի մարզ	հիմնել է Գրիգոր Լուսավորիչը. կառուցվել է 4-11-րդ դարերում	կանգուն	Վարդավառ (ավանդական կենցաղում)
13.	Զորավանք[6]	Սյունիքի մարզ		խոնարհված	Վարդավառ
14.	Ամարաս[7]	Արցախ, Մաճկալաշեն գյուղի մեջ	հիմնել է Գրիգոր Լուսավորիչը	կանգուն	Վարդավառ (ավանդական կենցաղում)
15.	Դիզափայտի կատարին գտնվող	Արցախ	4-5-րդ դարեր 7-րդ դար	կանգուն է մեկ եկեղեցի	Վարդավառ

---

1 **Ս. Մկրտչյան**, Վարդավառի էթնամշակութային և սոցիալական առանձնահատկությունները Տավուշում, էջ 204:

2 **Ա. Մխիթարեանց**, Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Ա, Մոսկուա-Ալէքսանդրապոլ, ՌՅԾ-1901, էջ 163: **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Շիրակ (Հառիճ), 2012, էջ 7:

3 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Շիրակ (Վահրամաբերդ), 2012, էջ 18:

4 **Ст. Лисицян**, “Святыни” у перевалов, с. 204.

5 **Ս. Մկրտչյան,** Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 118:

6 **Ст. Лисицян**, նշվ. աշխ., с. 206:

7 **Ե. Լալայեան**, Վարանդա, Նշանաւոր տոներ, ԱՀ, գիրք Գ, էջ 348:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը [1]
	Ս. Կատար [1]				
16.	Սաղիանի վանք[2] վանք[2]	Շամախի	անհայտ[3]		Վարդավառ
17.	Մեյսարու (Մասանց)	Շամախի, Մեյսարի գյուղ		հիմնավեր	Վարդավառ
18.	Մշո Ս. Կարապետ [4]	Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառ, Մուշ քաղաքի մոտ	հիմնել է Գրիգոր Լուսավորիչը. 4-րդ դար	խոնարհված	Վարդավառ
19.	Եղրդուտ (Շիշյուղո, Ս. Հովհաննես, Արծվաբերդի Ս. Նշան)[5]	Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառում՝ Մուշ քաղաքից 20-22կմ դեպի արևմուտք	հիմնել է Գրիգոր Լուսավորիչը. 4-րդ դար	խոնարհված	Վարդավառ
20.	Աշտիշատ [6]	Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառում, Աշտիշատ ավանում, Ս. Կարապետ վանքի մոտակայքում [7]	հիմնել է Գրիգոր Լուսավորիչը. 4-րդ դար	խոնարհված	Վարդավառ
21.	Մարութա Ս.	Սասուն [1]	9-րդ դար	խոնարհված	Վարդավառ

---

1 **Մակար եպս. Բարխուդարեանց**, նշվ. աշխ., էջ 204: **Ստ. Լիսիցյան**, Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 55: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 107:

2 **Քաջբերունի**, Բազմամիլիոն ժառանգություն, Վավերագրեր 2, Երևան, 2001, էջ 70:

3 **Մեսրովբ արք. Սմբատեանց**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, Տփխիս, 1896, էջ 37:

4 **Ռաֆֆի**, նշվ. աշխ., էջ 34: **Շաքար**, նշվ. աշխ., էջ 421: **Ա. Ալպոյաճեան**, նշվ. աշխ., էջ 1748:

5 Եղրդուտի վանք, ՔՀ, էջ 313-314:

6 **Շաքար**, նշվ. աշխ., էջ 417:

7 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 300:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը [1]
	Աստվածածին				
22.	Ս. Կարապետ[2]	Բուլանըխ	-[3]		Վարդավառ
23.	Կոփի Ս. Դանիել [4]	Բուլանըխ	4-րդ դար	խոնարհված	Վարդավառ
24.	Ս. Միքայել [5]	Մուսալեռ	-	-	Վարդավառ
25.	Ս. Մարտիրոս [6]	Մուսալեռ	-	-	Վարդավառ
26.	Ս. Սահակ [7]	Վան, Էրերնա	-	-	Վարդավառ
27.	Արակայի կամ Ս. Գրիգոր Նարեկացի [8]	Արակա	11-րդ դար[9]	-	Լուսավորչի գյուտ նշխարաց, Վարդավառ, Աստվածածի Վերափոխում
28.	Ս. Կարապետ[10]	Մարաշ	-	-	Վարդավառ
29.	Ս. Կարապետ[11]	Կտուց անապատ	9-րդ դար	կանգուն	Վարդավառ
30.	Նարեկա Ս. Գրիգոր [12]	Վան	10-րդ դար[13]	-	Վարդավառ
31.	Ս. Վառվառե կամ Ս. Վառվառ[1]	Խարբերդ, Չարսանջակ	-	խոնարհված	Վարդավառ

1 **Վ. Պետոյան**, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 35:

2 **Բենսէ**, Բուլանըխ կամ Հարք գավառ, ԱՀ, գիրք Զ, Թիֆլիս, 1900, էջ 68:

3 Աղյուսակի այն սյունակներում, որտեղ տվյալները բացակայում են, դրվել է հետևյալ՝ «-», նշանը:

4 **Ս. Մովսիսյան (Բեսնէ)**, Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, պրակ 3, Երևան, 1972, էջ 46:

5 **Գ. Գյոզալյան**, Մուսա լեռան ազգագրությունը, Երևան, 2001, էջ 215:

6 Նույն տեղում, էջ 259:

7 **Գ. Շէրենց**, նշվ. աշխ., էջ 76: **Ե. Լալայեան**, Վասպուրական, Նշանավոր վանքեր, ԱՀ, գիրք XXI, էջ 99:

8 **Հ. Ճանիկեան**, նշվ. աշխ., էջ 36-37:

9 **Ստ. Մելիք-Բախշյան**, Հայոց պաշտամունքային վայրեր, Երևան, 2009, էջ 71:

10 **Գր. Գալուստեան (Կիլիկեցի)**, Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 109:

11 **Գ. Շէրենց**, նշվ. աշխ., էջ 73:

12 Նշվ. աշխ., էջ 127:

13 **Ստ. Մելիք-Բախշյան**, նշվ. աշխ., էջ 309:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակա-շրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատա-ության հիմնական օրը [1]
32.	Զարդարիճ[2]	Խարբերդ	12-րդ դար[3]	խոնարհված	Վարդավառ
33.	Եղեգիի Ս. Նշան Հիւսենիկի Եօթնեակ [4]	Խարբերդ	-	-	Վարդավառ
34.	Քառասուն ման-կունք[5]	Խարբերդի նա-հանգ, Զարսան-ճակ, Մեծկերտ	-	խոնարհված	Վարդավառ
35.	Ասպարածին [6]	Արճակ	-	կիսախո-նարհ	Աստվածածնի Վերափոխում, Վարդավառ
36.	Պարլում (Պալլում)[7]	Քեսապ	-	-	Վարդավառ
37.	Ս. Խաչ [8]	Նոր Նախիջևան	18-րդ դար	կանգուն	Վարդավառ

[1] Նշվ. աշխ., էջ 387:

[2] **Վ. Սվազլեան**, նշվ. աշխ., էջ 22:

[3] **Ստ. Մելիք-Բախշյան**, նշվ. աշխ., էջ 141:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում, էջ 84-85, 97:

[7] Նույն տեղում, էջ 26:

[8] **Ե. Շահազիզ**, Նոր Նախիջևանը և Նոր նախիջևանցիք, ԱՀ, գիրք VII և VIII, Թիֆլիս, 1901, էջ 32: **Խ. Փորքշեյան**, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, ՀԱԲ, պրակ 2, Երևան, 1971, էջ 36: **Ռ. Պատկանյան**, Վարթևոր, Երկեր, Երևան, 1984, 96:

Եկեղեցիներ

Աղյուսակ 2

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
38.	Թուխմանուկ	Կոտայքի մարզ, գյուղ Մեղրաձոր [1]	-	կանգուն	Վարդավառ
39.	Սուրբ Սարգիս[2]	Լոռու մարզ, Վարդաբլուր գյուղ	12-րդ դար	կանգուն	Վարդավառ
40.	Սուրբ Աստվածածին կամ Յոթ վերք[3]	Շիրակի մարզ, Գյումրի քաղաք	19-րդ դար	կանգուն	Վարդավառ
41.	Ս. Հովհաննես[4]	Վայոց Ձորի մարզ, Մարտիրոս		կանգուն	Վարդավառ
42.	Ս. Վարդան Զորավար[5]	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի մոտ	13-րդ դար	կիսախոնարհ	Վարդավառ
43.	Զորեքդոնի[6]	Սյունիքի մարզ, Խնդրանց գյուղ	-	խոնարհված	Վարդավառ
44.	Զվար[7]	Սյունիքի մարզ	17-րդ դար[8]	հիմնավեր	Վարդավառ
45.	Զորավանք[9]	Սյունիքի մարզ	-	-	Վարդավառ
46.	Ս. Գրիգոր Լուսավորիչ[10]	Արցախ, Նինգ գյուղ	-	-	Վարդավառ
47.	Ս. Կատարինե[1]	Մարաշ	-	-	Վարդավառ

---

1 Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Լիլիթ Սիմոնյանին՝ սույնը հաղորդելու համար:

2 **Ե. Լալայեան**, Բորչալուի գաւառ, ԱՀ, գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 268: Նույնի՝ Բորչալուի գավառ, ԱՀ, գիրք VII և VIII, Թիֆլիս, 1901, էջ 353:

3 **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 118:

4 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Մարտիրոս, էջ 18, 23:

5 Նույնի՝ ԴԱՆ (Սյունիք), 2007-2008, էջ 8, 12, 17, 20, 38: **Հ. Աբրահամյան**, Վարդավառի տոնախմբությունը և Անգեղակոթի Սուրբ Վարդան Զորավար Եկեղեցին, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ, XV, Երևան, 2010, էջ 299-300, 303-304:

6 **Ստ. Լիսիցյան**, Զանգեզուրի հայերը, էջ 275:

7 Նույնի՝ “Святыни” у перевалов, с. 202:

8 **Ստ. Մելիք-Բախշյան**, նշվ. աշխ., էջ 143:

9 Նույն տեղում, էջ 206:

10 **Ե. Լալայեան**, Վարանդա, Նշանաւոր տոներ, ԱՀ, գիրք Գ, էջ 348:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
48.	Ս. Գևորգ[2]	Չարսանջակ, Գոտարիճ	-	-	Վարդավառ
49.	Ս. Աստվածածին[3]	Չարսանջակ, Գոտարիճ	-	-	Վարդավառ
50.	Յուսյուդարի Ս. Կարապետ[4]	Կ. Պոլիս	-	-	Վարդավառ
51.	Ս. Գևորգ[5]	Ղզլար (Հյուսիսային Կովկաս, Դաղստան)	-	հիմնավեր	Վարդավառ
52.	Ս. Գևորգ[6]	Ղարադաղ	-	-	Վարդավառ
53.	Ս. Երրորդություն[7]	Նախիջևանի ինքնավար հանրապետություն, Նորս գյուղ	14-րդ դար		Վարդավառ

1 **Գր. Գալուստեան**, նշվ. աշխ., էջ 572:

2 **Վ. Սվազլեան**, նշվ. աշխ., էջ 22:

3 Նույն տեղում:

4 **Գ. Սրվանձտյանց**, Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ, Երկեր, հատոր 1, Երևան, 1978, էջ 83:

5 **Գ. Գևորգյան**, նշվ. աշխ., էջ 9:

6 **Հ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 418-419:

7 **Ս. Ադամյան**, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի շինարարական գործունեությունը, «Էջմիածին» ամսագիր, Դ, Ս. Էջմիածին, 2016, էջ 123:

Մատուռներ Աղյուսակ 3

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
1.	Հազարանփրկիչ[1]	Վայոց Ձորի մարզ, Խաչիկ գյուղ	-	-	Վարդավառ
2.	Թուխմանուկ մատուռ	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	կանգուն	Վարդավառ
3.	Աբդըլլասար կամ Աղ-մաղան լեռան մատուռ[2]	Գեղարքունիքի մարզ	-	-	Վարդավառ
4.	Ձիարաթ[3]	Գեղարքունիքի մարզ, Հացառատ գյուղ	-	-	Վարդավառ
5.	Սուրբ Հակոբ[4]	Գեղարքունիքի մարզ, Ձորագյուղ	-	-	Վարդավառ
6.	Ղալթաղչի Ս. Հովհաննես[5]	Լոռու մարզ, Հարթագյուղ	-	կանգուն	Վարդավառ
7.	Նորաշենի Ս. Հովհաննես (սարի ստորոտը հայտնի է «Վարթևորի դուրան» անվամբ, որտեղ տոնական խնջույք են անցկացնում)[6]	Շիրակի մարզ, Գեղանիստ գյուղի մոտ	-	կանգուն	Վարդավառ
8.	Ս. Ոսկան[7]	Շիրակի մարզ, Բասեն գյուղի մոտ	-	կանգուն	Վարդավառ
9.	Խուստուփ[8]	Սյունիքի մարզ, Խուստուփ լեռ	-		Վարդավառ

---

1 Շնորհակալություն ենք հայտնում Խաչիկ գյուղի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Զաքարիա քահանա Անանյանին՝ սույնը հաղորդելու համար:

2 **Ե. Լալայեան**, Նոր-Բայազէտի գաւառ, ԱՀ, գիրք XVII, էջ 86:

3 Շնորհակալություն ենք հայտնում Հացառատ գյուղի նախկին բնակչուհի Հասմիկ Մեհրաբյանին՝ այս մասին հաղորդելու համար:

4 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Գեղարքունիք (Երանոս, Ձորագյուղ), 2005, էջ 13:

5 Նույնի՝ ԴԱՆ, Վահրամաբերդ, էջ 18:

6 Նույնի՝ ԴԱՆ, Շիրակ, Արագածոտն, 2012, էջ 3, 5, 6, 9, 28, 29, 31: **Ա. Պողոսյան**, ԴԱՆ, Փանիկ, էջ 6:

7 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Շիրակ (Բասեն), 2012, էջ 22:

8 **Ստ. Լիսիցյան**, Զանգեզուրի հայերը, էջ 275-276:

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
10.	Ս. Խաչատուր մատուռ [1]	Ջավախք, Աբուլ սարի կատարին	-	կանգուն	Վարդավառ
11.	Սուրբ սարի կամ Սուրբ Հովհաննես մատուռ[2]	Ջավախք, Գանձա գյուղի հանդիպակաց սարի գագաթին	-	կանգուն	Վարդավառ
12.	Վերին բերդ ապառաժի վրա գտնվող մատուռ[3]	Մոկաց գյուղաքաղաքի «Դաշտի թաղ» վայրի հյուսիսային կողմում	-	-	Վարդավառ
13.	Վարդ Պատրիկ իշխանի մատուռ-գերեզման [4]	Վան	-	-	Վարդավառ

Խաչքարեր Աղյուսակ 4

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
1.	Մուրադխաչ[5]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ		կանգուն	ազգային-եկեղեցական տոներ
2.	Խդրանց խաչ[6]	Սյունիք, Արծվանիկ գյուղ	-	-	Վարդավառ

---

1 Շնորհակալություն ենք հայտնում Ախալքակի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Տաթև քահանա Մարուքյանին՝ տեղեկությունը հայտնելու համար (2013 թ., հունվար):

2 Շնորհակալություն ենք հայտնում Վահան Տերյանի տուն-թանգարանի գիտաշխատող Նարինե Սիրականյանին՝ նյութը տրամադրելու համար (2013 թ., սեպտեմբեր):

3 **Ե. Լալայեան**, Վասպուրական.-Հաւատք, ԱՀ, գիրք XXVI, էջ 52:

4 **Գ. Շէրենց**, նշվ. աշխ., էջ 98:

5 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 39-40:

6 **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 118:

Բ. Ոչ կանոնական սրբատեղիներ

Նահատակների գերեզմաններ

Աղյուսակ 5

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
1.	Դալլաքենց բաղի նահատակ[1]	Քյավանդ	-	-	Զատիկ Համբարձում Վարդավառ
2.	Մուսինենց սուրբ[2]	Քյավանդ	-	-	Զատիկ Համբարձում Վարդավառ
3.	Ռուշանենց կամ Քյոխվենց սուրբ[3]	Քյավանդ	-	-	Զատիկ Համբարձում Վարդավառ
4.	Սրբի բաղ[4]	Քյավանդ	-	-	Զատիկ Համբարձում Վարդավառ
5.	Թելի տակի սուրբ[5]	Քյավանդ	-	-	Զատիկ Համբարձում Վարդավառ

---

1 **Քաջբերունի**, նշվ. աշխ., էջ 101-102:

2 Նշվ. աշխ., էջ 101-102:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:

Աղբյուրներ Աղյուսակ 6

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
	Մեսրոպի [1]	Վայոց Ձորի մարզ, Խաչիկ գյուղ	-	-	Վարդավառ
2.	Ուլակեր [2]	Վայոց Ձորի մարզ, Խաչիկ գյուղ	-	-	Վարդավառ
3.	Շորաղբյուր (աղի աղբյուր)[3]	Վայոց Ձորի մարզ, Խաչիկ գյուղ	-	-	Վարդավառ
4.	Արցընքար[4]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
5.	Վերին գյոլ[5]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
6.	Հորթլի ջուր[6]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
7.	Հայկազի[7]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
8.	Արսենքար	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
9.	Գըռաղբյուր[8]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի մոտ	-	-	Վարդավառ
10.	Շիշպալ[9]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
11.	Գըռաղբյուր[10]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
12.	Հարսնասար, ստորոտին՝ Լուսաղբյուր[11]	Շիրակի մարզ	-	-	Վարդավառ
13.	Կաթնաղբյուր		-	-	Վարդավառ

---

1 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Վայոց Ձոր (Խաչիկ), 2003, էջ 45, 47:
2 Նույն տեղում, էջ 45, 47:
3 Նույն տեղում:
4 **Ա. Պողոսյան**, ԴԱՆ, Գեղարքունիք (Ակունք), 2004, էջ 59:
5 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 53-54:
6 Նույն տեղում:
7 Նույն տեղում:
8 **Ա. Պողոսյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 60:
9 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 53-54:
10 **Ա. Պողոսյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 60:
11 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Շիրակ (Փանիկ), էջ 3, 4:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
	(Կաթնովաղբյուր, Կապուտ ջուր)[1]	Շիրակի մարզ, Սառնաղբյուր գյուղի մոտ			
14.	Կարաջալախ սրբավայր, «Գրիշ դյադյայի աղբյուր» կամ «պապայի աղբյուր» (Խաչքար-աղբյուր)[2]	Վայոց Ձորի մարզ, Եղեգնաձոր	-	-	Վարդավառ
15.	Օձի պորտ	Լոռու մարզ, Արդվի գյուղ	-	-	Վարդավառ
16.	Սառնաղբյուր [3]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
17.	Բարձրի [4]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
18.	Թթու աղբյուր կամ Թթու ջուր[5]	Տավուշի մարզ, Վազաշեն գյուղ	-	-	Վարդավառ
19.	Մրզանց[6]	Տավուշի մարզ, Գանձաքար գյուղ	-	-	Վարդավառ
20.	Գոլբուլաղ[7]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
21.	Քոռաղբյուր[8]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
22.	Մզանի[9]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
23.	Անցի[10]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
24.	Չարողշա[1]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ

---

1 Նույնի՝ ԴԱՆ, Սառնաղբյուր, էջ 21, 22: «ՀՀ մարզերի աշխարհագրական օբյեկտների անվանումները. Շիրակի մարզ», www.cadastre.am, էջ 13. 13.09.2013:

2 Նույնի՝ ԴԱՆ, Վայոց Ձոր (Եղեգնաձոր), 2003, էջ 1-2:

3 **Ս. Մկրտչյան**, Վարդավառի էթնամշակութային և սոցիալական առանձնահատկությունները Տավուշում, էջ 204:

4 Նույն տեղում:

5 Նույնի՝ Հայոց տոնական համակարգի..., էջ 246: Այս մասին հայտնել է նաև Հասմիկ Մեհրաբյանը:

6 Այս մասին հայտնել է նաև Հասմիկ Մեհրաբյանը:

7 **Ս. Մկրտչյան**, Վարդավառի էթնամշակութային և սոցիալական առանձնահատկությունները Տավուշում, էջ 204:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
25.	Կալեր[2]	Տավուշի մարզ, Վազաշեն գյուղի մոտ	-	-	Վարդավառ
26.	Կաթանք[3]	Հին Նախիջևանի Ապրակունիս գյուղի (Նախիջևանի ինքնավար հանրապետություն) Ս. Կարապետ վանքի արևելյան կողմում	-	-	Վարդավառ
27.	Գըրկ-կեօզ (Քառասնակ) աղբյուր-զբոսավայր[4]	Մարաշ	-	-	Վարդավառ
28.	Ս. Կատարինե[5]	Մարաշ	-	-	Վարդավառ
29.	Թարսառաքոլ[6]	Մարաշ			Վարդավառ
30.	Բորոտներու[7]	Մարաշ, Ույուզ-Փունարը	-	-	Վարդավառ
31.	Մնձուր սարի Անահիտ աստվածուհու կաթնաղբյուր[8]	Դերսիմ	-	-	Վարդավառ
32.	Իչմէ-ջուր[9]	Խարբերդ	-	-	Վարդավառ
33.	Սրնա[10]	Բալու-Պաղին	-	-	Վարդավառ
34.	Թեքնեջոք[11]	Քեսապ	-	-	Վարդավառ

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում:
3 **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 96:
4 **Գր. Գալուստեան**, նշվ. աշխ., էջ 232:
5 Նշվ. աշխ, էջ 233:
6 Նշվ. աշխ., էջ 232:
7 Նշվ. աշխ, էջ 233:
8 **Գ. Հալաջյան**, Դերսիմի հայերի ազգագրությունը, ՀԱԲ, պրակ 5, Երևան, 1973, էջ 259:
9 **Վ. Սվազլեան**, նշվ. աշխ., էջ 22:
10 Պատմութիւն Պաղնատան, Պոսթըն, 1966, էջ 284:
11 **Վ. Սվազլեան**, նշվ. աշխ., էջ 26 (աղբյուրը՝ Յակոբ Չոլաքեան, Քեսապ, հ. Ա, Պէյրութ, 1995, էջ 45):

Ծառեր Աղյուսակ 7

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
1.	Վարդան Մամիկոնյանի կաղնի[1]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
2.	Սոսիների պուրակ[2]	Մուսալեռ	-	-	Վարդավառ

Լեռնագագաթներ Աղյուսակ 8

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
1.	Սալվարդ-Աղոթարան[3]	Սյունիքի մարզ[4]	-	-	Վարդավառ
2.	Խուստուփ[5]	Սյունիքի մարզ	-	-	Վարդավառ
3.	Իշխանասարի (Իշիխլիի) Ս. Հովհաննես (Օհանես)[6]	Սյունիքի մարզ	-	-	Վարդավառ
4.	Սարվարդի (Սալվարդ, Աղոթարան)[7] (Լեռան գագաթին ժայռակույտեր են)	Սյունիքի մարզ	-	-	Վարդավառ
5.	Ճգնավորի սար[8]	Սյունիքի մարզ	-	-	Վարդավառ
6.	Մռավ լեռ[9] (Լեռան գագաթի վրա մի սպիտակ փոքր խաչքար կա, ըստ զրույցների, տեղադրված է նահատակի գերեզ-	Արցախ	-	-	Վարդավառ

---

1 Նյութը հաղորդել է Հասմիկ Մեհրաբյանը:

2 **Գ. Գյոզալյան**, նշվ. աշխ., էջ 259: **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 118:

3 **Ст. Лисицян**, “Святыни” у перевалов, с. 206.

4 Այժմ Զանգեզուր հասկացությունը ընդգրկում է Սիսիանի, Գորիսի, Ղափանի և մասամբ Մեղրու շրջանները (տե՛ս https://goo.gl/xF98ea, 06.06.2016):

5 **Ст. Лисицян**, “Святыни” у перевалов, с. 206.

6 Նույն տեղում: Նույնի՝ Զանգեզուրի հայերը, էջ 275:

7 Նույնի՝ Զանգեզուրի հայերը, էջ 275:

8 Նույն տեղում, էջ 279:

9 **Լ. Վարդանյան, Հ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 374:

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
	մանի վրա: Արևելյան մուտքի մոտ սառցատուն կա, որից սառը ջուր է բխում)[1]				
7.	Սուրբ լույս լեռ	Բալու-Պաղին գյուղ[2]	-	-	Վարդավառ
8.	Սուրբ լույս լեռ, ստորոտին՝ աղբյուր	Քղի, Դերսիմի սահմանին[3]	-	-	Վարդավառ

Քարանձավատիպ ուխտավայր-սրբատեղիներ Աղյուսակ 9

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
1.	Մաղարա (քարանձավային համալիր)[4]	Արագածոտնի մարզ, Նորաշեն գյուղի արոտավայրերի մոտ	-	-	Վարդավառ
2.	Մանթաշի կանաչներ[5]	Արագածոտնի մարզ, Նորաշեն գյուղի մոտ	-	-	Վարդավառ
3.	Ս. Վարդան (Վարդանամի սուրբ)[6] (քարանձավի մեջ գտնվող սրբավայր է, ներսում հոսող աղբյուր կա: Շուրջը դրված է Վարդան Մամիկոնյանի նկարը և մի քանի խաչքար)	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	բավարար	Վարդավառ
5.	Զաղա կամ Ս. Գրիգոր լուսավորիչ[1]	Շիրակի մարզ, Սառնաղբյուր	-	լավ	Վարդավառ

---

1 **Մակար եպս. Բարխուդարեանց**, նշվ. աշխ., էջ 283:
2 Պատմութիւն Պաղնատան, էջ 284:
3 **Վ. Տէր-Մինասեան**, նշվ. աշխ., էջ 150-151:
4 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Արագածոտն (Նորաշեն), 2012, էջ 30:
5 Նույն տեղում:
6 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 22-23: **Ա. Պողոսյան**, Ակունք, էջ 12, 26, 59:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
	(երեք սրահից բաղկացած քարանձավային սրբատեղի է, որի միջով ջուր է հոսում. սրահներից մեկում սրբի նշխարն ամփոփող «գերեզմանն» է)[2]	գյուղ			
6.	Փիլքահաս (ժողովրդական անվանումը՝ Փլչահաս, այսինքն՝ Փրկչահաս). քարայր կացարանների համալիր, ուխտավայր[3] (քարանձավ է, կացարանների համալիր: Ներսում ընդարձակ սրահ է՝ մոմավառության աշտանակներով: Առաստաղներից մեկի վրա այցելուները երազանքի քար են ամրացնում)	Վայոց Ձորի մարզ. գտնվում է Արփա գետի կիրճում՝ Ջերմուկ քաղաքից 2,5կմ հարավ	-	բավարար	Վարդավառ
7.	Ս. Հազարանփրկիչ[4]	Սյունիքի մարզ, Սառնակունք գյուղի մոտ			Վադավառ
	Ս. Մարտիրոս փոքրիկ քարայր-սրբատեղի[5]	Մուսալեռ, Քաբուսիե	-	-	Վարդավառ

---

1 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Սառնաղբյուր, էջ 1, 22, 24: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 4, էջ 502: «ՀՀ մարզերի աշխարհագրական օբյեկտների անվանումները. Շիրակի մարզ», www.cadastre.am, էջ 12. 13.09.2013:

2 Տե՛ս **Հ. Աբրահամյան**, Շիրակի վարդավառյան ուխտավայրերը (համառոտ նկարագիր), ՇՀՀԿ, Գիտական աշխատություններ, XV, Երևան, 2013, էջ 164-165:

3 Նույնի՝ ԴԱՆ, Գնդևազ, 2002, էջ 28, 33: Պետական ցուցակ ՀՀ Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Վայոց Ձորի մարզ, էջ 5:

4 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Սպանդարյան, էջ 2, 4, 7, 11:

5 **Գ. Գյոզալյան**, նշվ. աշխ., էջ 259:

Յայլաններ Աղյուսակ 10

zՀ /h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
1.	Դամբլուտի սար[1]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
2.	Աղբղա (Աղբուղա) սար [2]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
3.	Ամրղալա[3]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
4.	Սուլթանի ուրթ (Ֆիդայիների հովիտ)[4]	Տավուշի մարզ	-	-	Վարդավառ
5.	Խաչ[5]	Տավուշի մարզ, Վազաշեն գյուղի մոտ	-	-	Վարդավառ
6.	Հին յայլի մատուռ[6]	Լոռու մարզ, Ադիբեկ գյուղի մոտ	-	-	Վարդավառ

---

1 **Քաջբերունի**, Հայկական սովորություններ, ԱՀ, գիրք VII և VIII, Թիֆլիս, 1901, էջ 145:

2 **Ս. Մկրտչյան**, Վարդավառի էթնամշակութային և սոցիալական առանձնահատկությունները Տավուշում, էջ 204:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

5 Նույնի՝ Հայոց տոնական համակարգի…, էջ 246:

6 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Փանիկ, էջ 3:

Համալիր ուխտավայր-սրբատեղիներ Աղյուսակ 11

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
1	Թոփռլու կամ Ծակ քար[1] (սրբատեղիի մեջ մտնում են մատուռ, ծառ, ծակ քար)	Շիրակի մարզ, Հացիկ գյուղ	-	բավարար	Վարդավառ
2	Ղազանլվա կամ Ղայղազի Ղազանչի[2] (գյուղի ուխտավայրերն են խոյաձև աղբյուրը, վանքը՝ 7-րդ դարի մի եկեղեցիով[3])	Շիրակի մարզ	-	բավարար	Վարդավառ

Չտիպաբանված ուխտավայր-սրբատեղիներ Աղյուսակ 12

Հ/h	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
1.	Թևաթորոս սրբավայր[4] վայր[4]	Արագածոտնի մարզ, Նիգավան գյուղ	-	բավարար	Վարդավառ
2.	Զոմա[5]	Վայոց Ձորի մարզ, Զառիթափ գյուղ	-	-	Վարդավառ
3.	Գալիվանք	Վայոց Ձորի մարզ, Գլաձոր գյուղ	-	-	Վարդավառ
4.	Սարի Ս. Հովհաննես կամ Ծարավ Ձոր[6]	Գեղարքունիքի մարզ, Ձոլաքար	-	-	Վարդավառ

---

1 Նույնի՝ ԴԱՆ, Վահրամաբերդ, էջ 3, 18: **Ա. Պողոսյան**, ԴԱՆ, Շիրակ (Փանիկ), էջ 6:

2 **Հ. Աբրահամյան**, Շիրակի վարդավառյան ուխտավայրերը, էջ 160:

3 Նշվ. աշխ., էջ 167:

4 **Լ. Սիմոնյան**, Թևաթորոս և Տեսկան որդի. առասպելական կերպարների մեկնություն Դերսիմի ազգագրական նյութերի քննությամբ, Հայ ժողովրդական մշակույթ XV, Ա-վանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան, 2010, էջ 465:

5 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Եղեգնաձոր, էջ 38:

6 Նույնի՝ ԴԱՆ, Գեղարքունիք (Դդմաշեն), 2004, էջ 40: **Ստ. Մելիք-Բախշյան**, նշվ. աշխ., էջ 359:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
		գյուղից 15կմ հվ, լեռան գագաթին			
5.	Կոշավանք, Քոռբուլախա վանք[1] (մի խումբ խաչքարերից բաղկացած սրբավայր է, որոնք ծածկված են քարե պատով)	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղից ոչ հեռու	-	բավարար	Վարդավառ
6.	Տաշ-կափուն (Դաշ Գափուն)[2] (Կիկլոպյան ամրոց է, որի ներսում միջնաբերդ կա: Վերջինիս ներսի բնակավայրերերից հարավ գտնվում են ժայռաբեկորներից և խաչքարերից կռուցված քարե դուռ-մատուռները[3], որոնք, հավանաբար, եղել են նախաքրիստոնեական սրբավայրեր[4])	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հարավարևելյան կողմի սարահարթ	-	բավարար	Վարդավառ
7.	Թաթոսի Թուխմանուկ[5]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
8.	Դարբնի Թուխմանուկ[6]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
9.	Դարբնի իշխանավանք[1] վանք[1]	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ

---

1 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 5, 38, 39 43, 50, 53: **Ա. Պողոսյան**, Ակունք, 12, 15, 18, 25, 52:

2 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 22, 38, 39, 53: **Ա. Պողոսյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 18-19:

3 *Տաշ-կափուն* թուրքերենով նշանակում է *քարե դուռ*:

4 https://hy.wikipedia.org/wiki/Քարե-դուռ_կիկլոպյան_ամրոց: https://hy.wikipedia.org/wiki/Կարճաղբյուր. 16.06.2016:

5 **Հ. Աբրահամյան**, ԴԱՆ, Ակունք, էջ 41, 53:

6 Նույն տեղում, էջ 41, 53:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
10.	Նարեկացու Թուխ մանուկ	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-	-	Վարդավառ
11.	Տեր Խաչատուր	Գեղարքունիքի մարզ, Վարդենիս գյուղ	-	-	Վարդավառ
12.	Գյուղատեղի «Հին գոմեր», ժող. անվանումը՝ Հին գոմերի խաչքար[2] (եկեղեցու ավերակներ, խաչքարեր)	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղ	-		Վարդավառ
13.	Սուրբ Հակոբ [3]	Գեղարքունիքի մարզ, Վարդենիս	-	-	Վարդավառ
14.	Ալթունդաղ (Ալթուն Թախթա)[4]	Գեղարքունիքի մարզ, Ձորագյուղ	-	-	Վարդավառ
15.	Օկոնի վանք. ամրոց[5]	Տավուշի մարզ, գյուղատեղի Օկոն (Սև քար)	-	-	Վարդավառ
16.	Հացուտի խաչ. ավերակ գյուղ[6] (եկեղեցու և գերեզմանոցի ավերակներ)	Տավուշի մարզ, Կողբ գյուղ	-	-	Վարդավառ
17.	Կարմիր Ավետարան[7]	Շիրակի մարզ, Վահրամաբերդ գյուղ	-	Ներկայումս Ավետարանը գյուղում չէ	Վարդավառ
18.	Սուրբ Գևորգ[8] (քարե շարվածքի մեջ առնված խաչքարերի	Շիրակի մարզ, Կապս գյուղի մոտ	-	բավարար	Վարդավառ

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 2:

[3] Նույն տեղում, էջ 53:

[4] Նույնի՝ ԴԱՆ, Գեղարքունիք (Երանոս, Ձորագյուղ), 2005, էջ 13:

[5] **Ս. Մկրտչյան**, Վարդավառի էթնամշակութային և սոցիալական առանձնահատկությունները Տավուշում, էջ 204:

[6] Նույն տեղում, էջ 204:

[7] **Հ. Աբրահամյան**, Շիրակի վարդավառյան ուխտավայրերը, էջ 167:

[8] Նույնի՝ ԴԱՆ, Կապս, 2012, էջ 13, 15, 17: **Ա. Պողոսյան**, ԴԱՆ, Կապս, էջ 11:

Հ/հ	Սրբավայրի տիպ	Գտնվելու վայր	Հիմնադրման ժամանակաշրջան	Ընդհանուր վիճակը	Տոնակատարության հիմնական օրը
	բեկորներ, շուրջը՝ փայտե խաչեր և քարակույտեր)[1]				
19.	Լիշկվազ[2]	Սյունիքի մարզ	-	-	Վարդավառ
20.	Թոս[3]	Սյունիքի մարզ	-	-	Վարդավառ
21.	Սարուշենի Ավետարան[4]	Արցախ, Սարուշեն գյուղ	-	-	Վարդավառ
22.	Սարիբեկ[5]	Արցախ, Դաշուշեն գյուղի մոտ	-	-	Վարդավառ
23.	Ս. Գևորգ կամ Օղլան վերան[6]	Ջավախք. Կարծախ, Գեոգդաղի լանջին՝ ժայռերի միջև			Աստվածածնի Վերափոխման և Վարդավառի տոներին հաջորդող երկուշաբթի օրեր. ուխտի են գնում ամուլ կանայք
24.	Գեքլու ուխտավայր [7]	Բասեն	-	-	Վարդավառ
25.	Ղզլջա ուխտավայր [8]	Բասեն	-	-	Վարդավառ
26.	Վարոս-Թաթոս	Արմուտլի	-	-	Վարդավառ
27.	Թադեոս առաքյալ (Թաքսառաքոլ) ուխտավայր [9]	Մարաշ	-	-	Վարդավառ
28.	Քամիկ [10]	Բալու	-	-	Վարդավառ

---

1 **Հ. Աբրահամյան**, Շիրակի վարդավառյան ուխտավայրերը, էջ 165-166:

2 **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 118:

3 Նույն տեղում:

4 **Ե. Լալայեան**, Վարանդա, Նշանավոր տոներ, ԱՀ, գիրք Գ, էջ 348:

5 Նույն տեղում:

6 Նույնի՝ Ջաւախք, ԱՀ, գիրք Ա, Շուշի, 1896, էջ 372:

7 **Գ. Հակոբյան**, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, 244 էջ:

8 Նույն տեղում:

9 **Գր. Գալուստեան**, նշվ. աշխ., էջ 232:

10 **Վ. Սվազլեան**, նշվ. աշխ., էջ 22:

ՎԱՐԴԱՎԱՌՅԱՆ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Բանալի բառեր *- Վարդավառ, ուխտավայր, սրբատեղի, կանոնական, ոչ կանոնական, վանք, եկեղեցի, մատուռ, խաչքար, ծառ, աղբյուր, նահատակի գերեզման, լեռնագագաթ, տիպաբանություն:*

Հասմիկ Աբրահամյան

Վարդավառը թե՛ ավանդական, թե՛ արդի կենցաղում հիմնականում նշվել է և նշվում է ուխտավայրերում: Գրավոր և դաշտային ազգագրական նյութերից դուրս բերված վարդավառյան 160 ուխտավայր-սրբատեղիների վերլուծության հիման վրա ներկայացվել է մի քանի օրինաչափություն. 1. Ուխտավայրերի մի ստվար հատվածի տոնակատարության օրը Վարդավառն է: Սակայն որոշ ուխտավայրեր գնում են նաև մի քանի այլ տոների ժամանակ: 2. Ժողովրդի որոշակի հատվածի ընկալմամբ տոնը կապված է Հովհաննես Մկրտչի, Մարիամ Աստվածածնի, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի և Վարդան Մամիկոնյանի հետ: Սակայն ժողովուրդը սրբի և տոնի միջև պատճառահետևանքային կապ չի տեսնում և ընդհուպ մինչև մեր օրերն ընկալում է որպես սրբի տոն կամ ուխտի օր (բացառությամբ Անգեղակոթի, որտեղ Վարդավառը համարում են Վարդան Մամիկոնյանի տոն): 3. Որոշ ուխտավայրեր (այդ թվում՝ նաև վարդավառյան) նվիրական են եղել նաև հարևան մահմեդականների համար: 4. Տիպաբանել ենք ուխտավայրերի երկու խումբ՝ կանոնական և ոչ կանոնական՝ ներակայցնելով նաև դրանց ներքին բաժանումները:

КЛАССИФИКАЦИЯ МЕСТ ПАЛОМНИЧЕСТВА ВАРДАВАРА

Асмик Абраамян

Ключевые слова *- Вардавар, место паломинчества, святое место, канонический, не канонический, монастырь, церковь, часовня, хачкар, дерево, родник, магила мученика, горная вершина, типология.*

Вардавар, как в традиционном, так и в современном быту отмечался и отмечается в местах паломничества. Из анализа изучения письменных и полевых этнографических материалов 160 вардаварских мест паломничества, выделены несколько закономерностей: 1. Днем празднования многочисленных мест паломничества является Вардавар. 2. По понятиям определенной части населения (людей) праздник связан с Иоганом Крестителем, Девой Марией, Григорием Просветителем, Сааком Партевом и Варданом Мамиконяном. 3. Некоторые

святые места (в том числе и вардаварские) священны были также для соседних магометян. 4. Выделили (классифицировали) две группы паломнических мест: канонические и не канонические с их внутренними разделами.

AN EXPERIMENT OF CLASSIFICATION OF VARDAVAR SANCTUARIES

Hasmik Abrahamyan

Keywords: *Vardavar, sanctuary, canonical, non-canonical, monastery, church, chapel, khachkhar (cross-stone), tree, source, grave of martyr, peak, typology.*

Both in traditional and in modern life Vardavar (the Feast of the Transfiguration) is mainly celebrated in the sanctuaries. In the article some patterns are presented based on the analysis of 160 Vardavar sanctuaries excerpted from written and field ethnographic materials: 1. Vardavar is the principal day of celebration for numerous sanctuaries. But the people visit some other sanctuaries during other feasts as well. 2. For some people Vardavar is considered to be the feast of John the Baptist, the Virgin Mary, Gregory the Illuminator, Sahak Partev and Vardan Mamikonyan. But they don't see a causal connection between the saint and the feast and up to now Vardavar is accepted as a feast of saint or a pilgrimage day (except the Angeghakot Church of St. Vartan the General). 3. Some of the sanctuaries (including that of the Vardavar) have been sacramental as well as for the neighboring Muslims. 4. We have classified two groups of sanctuaries: canonical and non-canonical, presenting their internal divisions.